

ԲԱԶԷԻ ԵՐԳԸ

ՄԱԶՍԻՄ ԳՈՐԿԻՒԻՑ — Թարգմ. Լեոն Թումանյանի

Ծովը նիրհում է:

Այստեղ, եզերքին, փուլել է նա վիթխարու պէս և ծուլօրէն հեռում է, իսկ հեռուում արդէն քնած է ու անշարժ, լուսնի կապտաւուն փայլի մէջ կորած: Քաւշի պէս քնքոյշ և սեին տալով, աչնտեղ նա միախառնւել է հարաւային կապույտ երկնքին ու խոր քուն է մտել, արտացոլելով իւր մէջ փեպրաւոր ամպերի անշարժ ու թափանցիկ հիւսւածքը, որը չի թագցնում իւր երևում աստղերի ոսկեղէն նախշերը: Կարծես երկնքը քանի զնու՞մ աւելի է կռանում ծովի վերայ, ցանկանալով ըմբռնել այն, ինչ որ շշնջում են անհանգիստ ալիքները ափը սողալով:

Լեռները հիւսիս-արևելեան քամուց Ֆանտաստիլօրէն կռացրած ծառերի միջից ուժգին թափով վրանց են արել կապարները շէպի իրանց գլխավերևի կապույտ անապատը և նրանց չոր ու կոպկոպ զծագրութիւնը յարդարել է հարաւային գիշերի տաք և գուրալիր միգի մէջ փաթաթւած:

Լեռները հանդիսաւոր կերպով մտախոհ են: Նրանց մութ շւաքն ընկել է կոհակների պերճ կանաչաւուն մէջքին ու բարուրէլ նրանց, կ'ասես ուզում լինի կանգնեցնել այդ միակ շարժումը և լսեղեղ ջրի անդադրում ծփումն ու փրփուրի հռուսանքը՝ — բոլոր ձայները, որոնք խանգարում են համադարած խորհրդաւոր անդորութիւնը:

— Այլա՛ն. սկ-պր... մեղմ թառանչում է շումցի հին չորան Նադիր-Ռահիմօղլին, որ միշտ էլ տխուր է տրամադրւած լինում:

Նա մի բարձրահասակ, ալեգարդ, հարաւային արևի տակ այրւած, չոր-չոր ու խելացի ծերունի է:

Մենք պարկեւ ենք աւագին մի ահագին մամռապար քարափի մօտ, որ վայր է ընկել հարազատ սարից ու նրա շւաքում նայում է այնպէս արհամարհ և խոժոռադէմ: Դէպի ծովը դարձրած կողքին ալիքը ճիւղ ու ծովային խոտերն շարժել—քաշ արել: Կ'ասես դրանցով քարափը կապտոած լինի սարերը ծովիցը անջրպետող աւազուկի շերտից: Մեր խարոյկը լուսաւորում է նրա սարերին արած կողքը. բոցը թուրբում է, և նրա խոր ճաքերի ցանցով պատած երեսին շողքեր են վազւըզում: Թւում է թէ նա մտածում է և գգում...

Ռահիմի հետ նոր բռնած ձկներից խաշու ենք եփում, և երկուսով էլ ընկղմել ենք մի այնպիսի բացառիկ արամադրութեան մէջ, երբ ամեն ինչ մարդու ջինջ է երևում ու շնչաւորւած և թոյլ է տալիս թափանցել իրան, երբ մարդու սիրտ այնքան մաքուր է ու հանգիստ, և էլ ուրիշ ցանկութիւն չկայ, բացի մտածելու ցանկութիւնից:

Ծովը փարւում է ափին, և ալիքները այնպէս են մեղամաղձիկ փաղաքշանքով մրմնջում որ՝ կ'ասես խնդրում լինեն կրակի մօտ տաքանալու: Երբեմն այդ ընդհանուր ներդաշնակ ծփումի միջից լսելի է լինում մի աւելի բարձր ու շարածճի-նենգաւոր ձայն—այդ համարձակ ալիքներից մէկն է սողալով դէպի մեզ գալիս: Ռահիմը արդէն համեմատեց ալիքները կանանց հետ և կասկածեց, որ նրանք ուզում կ'լինեն զրկել և համբուրել մեզ:

Նա կուրծքի վերայ պարկեւ է աւագին, գլուխը դէպի ծովը, և, կռները սիւն դաւած ծնօտին, խորագննին հայեացքով նայում է մշուշապատ հեռուն: Ոչխարի մորթէ փափախը ետ է գնացել ծոճրակը և ծովիցը զով է շնչում նրա ամբողջովին մանր կնճիռներով պատած ճակատին: Նա ինքն իրան փիլիսոփայութիւն է անում, առանց հարցնելու, լսում եմ իրան, թէ ոչ, և առանց մի փոքր անգամ ուշադրութիւն դարձնելու իմ վրայ,—կարծես ծովի հետ լինի խօսելիս:

—Ասածուն հաւատարիմ մարդը դրախտ է գնում. բն ով որ չի ծառայում Աստծուն ու նրա մարգարէին, կարելի է նա այս փըր-

փուրի մէջ է... Եւ այն ջրի երեսի արծաթանման պէծերը գուցէ հէնց նա է... Ո՞վ գիտի:

Լայնասփիւռ պղտոր երկինքը կամաց-կամաց պարզոււմ է: Նրա վրայ երեւան են գալիս լուսնի անհոգ կերպով գցած շողերը. նա արդէն Դուրս է լողացել սարերի սաղարթապար կապարների քամակից և այժմ մտախոհ շաշ է փալիս իւր լոյսը ծովի վրայ, որը շիմաւորոււմ է նրան մեղմ հառաչելով...

—Ռահիմ! Մի հէքիաթ ասա... Խնդրում եմ ծերունուց:
Ինչո՞ւ որ.—հարցնում է նա՝ երեսը առանց ինձ Դարձ-
նելու:

—Հէնց այնպէս! Ես սիրում եմ քո հէքիաթները:

—Բոլորն էլ պատմել եմ... Ել չեմ իմանում...:

Ուզում է որ մէկ էլ ինչդրեմ. ես էլ ինչդրում եմ:

—Վաղեմ մի երգ պատմեմ,—համաձայնոււմ է Ռահիմը:

Ես ցանկութիւն եմ յայտնում լսել հինաւուրց երգը, և նա պատմում է ձայնը լքած, աշխատելով պահպանած լինել Դաշտա-
վայրի ինքնօրինակ երգի մեղեդին:

I

Բարձր լեռները քաշեց լորպուն ու կուրապ եկած՝ խաւար ձորի մէջ պարկեց, աչքերը ծովին Դարձրած:

Բարձր երկնքում փայլում էր արև. այլևա՞ծ լեռները փոթ էին շնչում Դէպի երկինքը. ներքեն ալիքը ծեծկոււմ էր քարին...:

Եւ ձորի միջով, մշուշով պատած, շիթեր ցայտելով՝ զեպն էր սլանում ծովին հանդիման.

Փրփուր կտրած, ալէգարԴ, ուժգին, ճեղքում էր սարը և շիրոււմ ծովը սաստիկ ոռնալով:

Յանկարծ երկնքից այն ձորի մէջը, ուր լորպուն էր պարկել գալարուն, վայր ընկաւ բազէն, կուրծքը խորտակած, փեղուր-
ներն արնոպ...:

Ճիչ արձակելով շիպաւ նա զեպնին և թոյլ ցատումով՝ ծեծ-
կոււմ էր կուրծքը լեռ քարափններին...:

Լորպուն վախեցաւ ու արագ-արագ մի կողմը քաշեց, բայց գլխի ընկաւ շուրթով, որ մօտ է թռչունի մահը:

Նա մօտիկ սողաց ջարդւած թռչունին, ուշիշ երեսին սուլելով, ասաց.

—Ի՞նչ կայ, մեռնում ես:

—Մեռնում եմ, այո: Խոր հառաչանքով նա պարտասխանեց.—
Ես շար ապրեցի... Երկար ապրեցի... Ես քաջ կուեցի ու փեսայ
երկինք: Այնպէս մօտիկից երբէք չես կարող պեսնել շու նրան, այ
ողորմելի!

—Է՛հ, քո երկինքն էլ! Ի՞նչ բան է որ նա. մի շափարկ փեղ
է. ո՞նց սողամ այնպեղ. հիանալի է այսփեղ ինձ համար—տաք է
և խոնաւ:

Այս ասաց լորպուն ազար թռչունին և ինքն իրա մէջ նրա
ցնորքի վրայ ծիծաղեց:

Ու այսպէս խորհեց. «Սողա կամ թռի, վերջը յայտնի է.
մենք բոլորս էլ հողն ենք մտնելու, հող ենք շառնալու...»

Անվհեր բազէն յանկարծ թուարաց, փեղիցը կանգնեց, աչք
ածեց ձորին:

Չուրը մաղւում էր քարափի ծեղքից. և խաւար ձորում օդը
խնդրւած էր, գարշ հոտ էր դալիս:

Եւ գոչեց բազէն, քանի ուժ ունէր, ցաւով, վշտահար. «Ախ,
թէ որ մէկ էլ երկինք սաւառնել կարողանայի...»

Լորպուն մտածեց. «Երևի քաղցր է իսկապէս ապրելն երկնքի
խորքում, որ սա հեծում է այսպէս շառնազին»:

Եւ առաջարկեց ազար թռչունին. «Բու էլ մօտեցիր ձորի
պունգին, քեզ ցած շարփիր»:

«Գուցէ թևերդ վերև հանեցին, և շու մի փոքր էլ կ'ապրես
քո սիրած փարերքի միջում»:

Եւ բազէն ցնցեց, թոյլ ձիչ հանելով. ձանկերի վրայ սօթիկ
քարերի երեսով սահեց, մօտ գնաց ձորին.

Եւ բաշին կանգնած թևերը պարզեց, խոր հոգոց քաշեց,
աչքերը ցոլացին—ու ցած գլորեց:

Ինքն էլ որպէս քար, քարի շիպչելով, արագ ընկնում էր,
ջարդում թևերը, ցրում փեփուրը.

Գետի լափինը վեր կալաւ նրան, արիւնը լւաց, փրփուրով պա-
տեց, փախցրեց ծովը.

Ծովի ալիքն էլ փխուր մրմունջով զարկում էր քարին, և լայնածաւալ ծովի երեսին էլ չերևաց նրա շիակը...

II

Չորումը պարկած երկար խորհում էր լորպուռն թռչունի մահւան ու նրա բաղձանքի մասին շէպի երկինքը:

Եւ ահա նայեց այն հեռաստանին, որը յաւիտեան աչքեր է շոյում բաշտի պատրանքով:

— Ի՞նչ էր փեսիլ որ մահացած բազէն այդ անապատում անփուտ ու անփակ:

— Ինչո՞ւ այդպիսի մահից չեփոջ էլ սիրտ են վրդովում իրանց կարօտով շէպի երկինքը. ի՞նչ են հասկացել:

— Ես այդ բոլորը իսկոյն կ'իմանամ՝ երկինք թռչելով թէկուզ կարճ միջոց:

Ասաց ու արաւ: Ու կծիկ գալով ցափեց օդի մէջ, ժայաւէնի պէս շողաց արևում:

Սողուն ծնւածը— թռչել չի կարող. մոռացել էր այս, և, վայր ընկնելով շիպաւ նա քարին, սակայն չջարդեց, այլ ծիծաղեց:

— Ա՛յս էր ուրեմն երկինք թռչելու հրաշալիքը. վայր ընկնելու մէջ... անմիտ թռչուններ!

— Երկրին անգիտակ, երկրում թախծալի, նրանք ձգտում են բարձր երկինքը և կեանք որոնում քոթ անապատում:

— Այնտեղ շափարկ է: Առաջ է լոյսը, բայց ոչ կերակուր, ոչ էլ նեցուկ կայ կենդանի մարմին:

— Գոռոզութեանն ինչ? էլ ի՞նչ նախափինք? որպէսզի սքողեն իրանց իշձերի անմտութիւնը?!

— Եւ որ այդպիսով թագցնեն իրանց անպէտքութիւնը կեանքի գործերում. անմիտ թռչուններ!

— Իրանց խօսքերը էլ այսուհետեւ ինձ չեն խաբելու. ամեն բան գիտեմ. փեսայ երկինքը:

— Թառչ ես այնտեղ, չափեցի նորան, թէև վայր ընկայ. բայց աւելի եմ հաւատում ես ինձ:

— Եւ պատրանքներով թող նրանք ապրեն, որոնք չեն կարող սիրել երկիրը... ճշմարտութիւնը ես արդէն գիտեմ.

—Իրանց կոչերին էլ չեմ հաւարարւ. ես հողածին եմ, երկրում էլ կ'ապրեմ:

Ու ինքնահաւան նա կծիկ եկաւ քարափի վերայ:

Մոզն ամբողջովին շողահարւում էր վառ հարաւային արեգակի սակ, և կոհակները հանդարտ շաշիւնով զարկւում են ափին:

Եւ նրանց մեղմիկ շաշիւնի միջից այս երգն էր հնչում երկինքը սիրող թռչունի մասին:

—Անվեհեր բազէ! Գու որ ապրեցիր անհուն երկնքում, անծայր երկնքում, սէրդ արեգակի:

—Քաջասիրտ բազէ! Որ հանգիստ գտար անուրա ծովի մէջ, անսակ ծովի մէջ:

—Թէկուզ Դու մեռար... Բայց քո անունը հոգով քաջերի և ուժեղների երգերի միջին յաւէտ կը հնչէ, որպէս ուժգին կոչ, Դէպ ազատութիւնն ու Դէպի լոյսը:

Լուռ է ծովի ոսկէշող հեռաստանը, մելամաղծիկ կերպով ալիքները ծփում են աւազին, և ես անխօս նայում եմ Ռահիմին, որ նոր է Դադարել ծովին բազէի երգը պարմելու: Լուսնի շողերից ծովի երեսի արծաթափայլ պէծերը հն շարանում են:

Մեր փոքրիկ կաթսան հանդարտ թշուում է:

Ալիքներից մինը խաղալով ափն է գլորւում և խռովայոյզ աշմուկով սողում է Դէպի Ռահիմի գլուխը:

—Ո՛ւր ես գալիս... Քաշւիր! ձեռքով է անում նրան Ռահիմը, և նա խոնարհ կրկին ետ է գլորւում ծովը:

Ինձ համար Ռահիմի ալիքները շնչաւորող վարմունքը բնաւ ծիծաղելի չէ, ո՛չ էլ զարգանդ: Ամեն ինչ շրջակայքում նայում է մի փարօրինակ կենդանութեամբ, մեղմ, գորովալի: Մովը այնպէս ազդու մարմանդ է, որ մարդ գգում է, թէ նրա՝ Դեռ օրւայ փոթից չհովացած սարերին փչող, թարմ շնչառութեան մէջ շատ հզօր և զսպւած ուժ պէտք է լինի: Մուգ-կապուազոյն երկնքի երեսին ասպիերի ոսկեղէն նախշերով մի ինչ որ հանդիսաւոր բան է գրւած, որ հոգի է հմայում և միտք է վրդովում յայրնութեան քայքայ սպասելիքով:

